«Շիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2023-2024
Մաթեմատիկա (5-րդ դասարան)

Անուն Ազգանուն _____

Դպրոց _____

Դասարան _____ Խումբ _____

Մաթեմատիկան թագուհին է բոլոր գիտությունների...

Կ. Գաուս

Մաղթում ենք հաջողություն:

1. Եթե տղան գնի 11 տետր, ապա նրա մոտ կմնա 500 դրամ, սակայն 15 տետր գնելու համար նրան չի բավարարի 700 դրամ: Որքա՞ն գումար ունի տղան: (4 միավոր)

2. Նկար 1–ում տասը կետերն այնպիսին են, որ նրանց մեջ կան երեքական կետեր, որոնք միացնելով՝ կարելի է ստանալ հավասար կողմերով եռանկյուններ: Ջնջել ամենաքիչ քանակով կետեր, որպեսզի մնացած կետերից ոչ մի երեքի միացումից չստացվի հավասար կողմերով եռանկյուն: (4 միավոր)



Նկար 1

3. Կարո՞ղ է բնական թիվը ավելի շատ կենտ բաժանարար ունենալ, քան զույգ: Պատասխանդ հիմնավորի՛ր: (4 միավոր)

4. Կտրող սարքը կարող է ցանկացած ստվարաթղթե ուղղանկյունուց կտրել քառակուսի, որի կողմը հավասար է ուղղանկյան փոքր կողմին: Տղան օգտվելով այդ կտրող սարքից՝ իր ունեցած ուղղանկյունը կտրեց 2 մեծ քառակուսիների, 3 ավելի փոքր քառակուսիների և 10սմ կողմերով 5 փոքր քառակուսիների: Գտի՛ր տղայի ուղղանկյան չափերը:Կատարի՛ր համապատասխան գծագիր: (4 միավոր)

5. 4-ից 10 թվերը դասավորի՛ր շրջաններում այնպես, որ մի ուղղի վրա գտնվող յուրաքանչյուր երեք թվերի գումարը հավասար լինի 23-ի: Պատասխանդ ցո՛ւյց տուր նկար 2-ի վրա: (4 միավոր)



Նկար 2